ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, «Նորավանք», 2009

Վերջին տարիներին Թուրքիայի տարածքում բնակվող կրոնափոխ (իսլամացված) հայերի վերաբերյալ բավականին հրապարակումներ եղան: Դրանց մի զգալի մասը սիրողական բնույթ ուներ, պարունակում էր ոչ մասնագիտական դատողություններ և չհիմնավորված գնահատականներ, գործը հասնում էր ռասիստական բնույթի ձևակերպումների: Մի քանի «հետազոտողներ» փորձ արեցին անգամ բանաձև ստեղծել, թե ով է հայը, ով իրեն իրավունք ունի հայ կոչել և այլն:

Այս հենքին միանգամայն հակառակ պատկեր էին ներկայացնում թուրքագետ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի ավագ փորձագետ Ռուբեն Մելքոնյանի հրապարակումները: Դրանք աչքի էին ընկնում նախ և առաջ նյութի խոր իմացությամբ և նուրբ դիտարկումներով, թուրքական մամուլի և գիտական պարբերականների հրապարակումներին ուշադիր, հետևողականորեն հետամուտ լինելու, Թուրքիայի տարածքում դաշտային-հետազոտական աշխատանքներ, ազգագրական բնույթի դիտարկումներ անելու հանգամանքով: Ռ.Մելքոնյանն իր հրապարակումներում չէր ընկնում սենսացիաների հետևից, այլ ներկայացնում էր առկա խնդիրն իր ողջ բազմաշերտությամբ, քննական վերլուծություններով:

Ռ.Մելքոնյանի՝ գործի նկատմամբ ունեցած վերոբերյալ մոտեցումները և պատասխանատու վերաբերմունքը դրսևորված են նաև «Իսլամաց-

ված հայերի խնդիրների շուրջ» աշխատության մեջ, որը 2011թ. հաղթող ճանաչվեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի և Համաշխարհային հայկական կոնգրեսի սահմանած «Լավագույն գիտական աշխատանք» մրցույթում՝ «Արևելագիտություն» անվանակարգում:

Գրքի արդեն իսկ վերնագիրը հուշում է, որ հեղինակը, լինելով հանդերձ հարցի լավագույն գիտակ, չի շտապում վերջնական բնույթ ունեցող եզրահանգումների դիմել: Սա շատ կարևոր, իսկական հետազոտող-գիտնականի պահվածք է՝ արժանի ամենայն խրախուսանքի: Նյութը մատուցված է այնպես, որ ընթերցողի առջև հարցը լուսաբանվում է ներկա պահին հնարավոր բոլոր տեսանկյուններից: Մեծապես կարևորում եմ հատկապես այն մոտեցումը, երբ հեղինակը նյութը ներկայացնում է առանձին անհատների կենսագրությունների, ճակատագրերի հանգամանալի դիտարկմամբ՝ այդ կերպ խուսափելով չհիմնավորված եզրակացություններ անելու գայթակղությունից: Այս մեթոդաբանությունը զգալի չափով նաև ազգագրություն գիտության ոլորտից է և առաջատար ուղղություն է դիտվում հատկապես արևմտյան գիտական հետազոտություններում:

Ռ.Մելքոնյանի աշխատանքն ընթերցելիս մեր առջև վեր է հառնում հայության մի խումբ, մի զանգված, որը փորձում է իր ինքնությունը պահպանել բոլոր հնարավոր միջոցներով, երբեմն, սակայն, տեղի տալով բռնի ճնշումներին: Բնութագրական է, որ այդ միջոցներն ունեցել են և ունեն իրենց զուգահեռներն աշխարհի տարբեր ժողովուրդների, նման իրավիճակներում գտնվող տարբեր խմբերի մեջ: Այսինքն, հեղինակի շեշտադրումները պայմանավորված են ոչ այնքան և ոչ միայն նյութի թելադրանքով, որքան որ գիտության մի բարդ, բայց և հետաքրքիր ճյուղի իմացության արդյունք են:

Հարություն Մարության
պատմական գիտությունների դոկտոր